

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
/տևողությունը՝ 150 րոպե/
(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)
10-րդ դասարան

1. Գրե՛ք պողպատի և ալյումինի ձուլման ձեռնարկությունների տեղաբաշխման սկզբունքները-----1,5 միավոր
2. Ի՞նչ են քարտեզագրամը և քարտեզադիագրամը (բերե՛ք մեկական օրինակ)-----2 միավոր
3. Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի +19°C –ի, եթե նույն պահին Արարատի գագաթին -5°C է (հաշվարկը կատարել 6°C -ով):-----1 միավոր
4. Որոշե՛ք Արեգակի ճառագայթների անկման անկյան մեծությունը հունիսի 22-ին, կեսօրին, Կին (հս.լ. 50°), Սանկտ Պետերբուրգ (հս.լ. 60°), Քեյփթաուն (հվ.լ. 33°) և Կիտո (լ. 0°) քաղաքներում (պատասխանները ստացե՛ք բանաձևերով)-----2 միավոր
5. Ի՞նչ են բազմաթերթ քարտեզները: Ի՞նչ սկզբունքներով է երկրագունդը պատկերվում դրանց միջոցով:-----2 միավոր
6. Ի՞նչ է պետական սահմանը: Համառոտ բնութագրեք պետական սահմանի տիպերը-----2 միավոր
7. Ի՞նչ են աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (USZ-GIS) և ի՞նչ նպատակով են օգտագործվում -----1 միավոր
8. Երկրի առաջացման և զարգացման ամբողջ ժամանակաշրջանը քանի՞ փուլի է բաժանվում: Թվարկե՛ք: Դրանցից 1-ին փուլը քանի՞ տարի է տևել և ո՞ր դարաշրջաններն է ընդգրկում -----2 միավոր
9. Ե՞րբ է հիմնադրվել Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ): Ո՞րն է նրա գլխավոր նպատակը: Քանի՞ սն են ՄԱԿ-ի հիմնադիր անդամ երկրները: Այժմ կազմակերպությունը քանի անդամ երկիր ունի և ՀՀ-ն ե՞րբ է անդամակցել նրան: -----2 միավոր
10. Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ-----1,5 միավոր
 1. ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է Վրաստանին և Թուրքիային:
 2. Մարզի և Թուրքիայի միջև սահմանն ամբողջությամբ անցնում է Ախուրյան գետով:
 3. Ձմեռը մեղմ է և սակավաձյուն:
 4. Կան պեմզայի, տուֆի, գորշ ածխի պաշարներ:
 5. Խոզաբուծությունը և շերամապահությունը մասնագիտացված ենթաձյուղեր են:
 6. Անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 15%-ը:

11. Գրե՛ք Հայկական լեռնաշխարհի ծալքաբեկորային ծագման լեռնագագաթների համարները-----1 միավոր

1. Սուկավետ

2. Քաչքար

3. Սիփան

4. Ծղուկ

5. Մեծ Եղնախաղ

6. Գոմշասար

7. Աչքասար

8. Ուրասար

12. Ո՞րքան էլեկտրաէներգիա (կվտ/ժամ) կարելի է ստանալ 2 տոննա նավթի (ջերմային գործակիցը՝ 1,5) և 5 տոննա գորշ ածխի (ջերմային գործակիցը՝ 0,5) այրումից (պատասխանը ստանալ հաշվարկով)-----2 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝



Ա.Թ. Գրիգորյան

Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)
10-րդ դասարան

1. **Պողպատի ձուլման** ձեռնարկությունները տեղաբաշխվում են հետևյալ սկզբունքով.

ա) հումքի աղբյուրների (երկաթաքարի) մոտ

բ) վառելիքի աղբյուրների (ածխի) մոտ

գ) հումքի և վառելիքի միջև գտնվող երկաթուղային մայրուղիների վրա գտնվող քաղաքներում

դ) հումք կամ վառելիք ներմուծող երկրներում՝ նավահանգստային քաղաքներում (օրինակ Ճապոնիայում):

Այլումինի ձուլումը շատ էներգատար է և ջրատար, հետևաբար դրանց ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխված են էժան էներգիայի աղբյուրների (Ջրէկ) և խոշոր գետերի ափերին (օրինակ ՌԴ-ում՝ Ենիսեյ (Կրասնոյարսկ), Անգարա (Բրատսկ) գետերի ափերին):

2. **Քարտեզագրամը** տարածքային տարբեր միավորներում գույներով կամ ստվերագծերով տրված որևէ երևույթի արտահայտվածության աստիճանի տարբերությունների պատկերումն է: Օրինակ, որևէ տարածքի բնակչության խտության տարբերությունները:

Քարտեզադիագրամը քարտեզ է, որի վրա պատկերված տարածքի որոշ մասերում

պայմանական դիագրամային նշաններով (շրջան, խորանարդ, ուղղանկյունանիստ և այլն) ցույց

են տրվում վիճակագրական տվյալներ: Օրինակ, որևէ շրջանի հողային ֆոնդի կառուցվածքը:

3. 1165 մետր

4. ա) Կիևում $90^\circ - (50^\circ - 23,5^\circ) = 63,5^\circ$

բ) Սանկտ Պետերբուրգում $90^\circ - (60^\circ - 23,5^\circ) = 53,5^\circ$

գ) Քեյփթաունում $90^\circ - (33^\circ + 23,5^\circ) = 33,5^\circ$

դ) Կիտոյում $90^\circ - 23,5^\circ = 66,5^\circ$:

5. Երկրի մակերևույթը կամ նրա մեծ տարածքները առանց աղավաղման պատկերելու համար օգտվում են բազմաթերթ քարտեզներից: Այդ նպատակով Երկրի մակերևույթի խոշոր տարածքները որոշակի

օրինաչափությամբ բաժանվում են ավելի փոքր՝ համեմատաբար հավասար մասերի և յուրաքանչյուր մասը միևնույն մասշտաբով քարտեզագրելով՝ կազմում են խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներ: Դրանք

որոշակի հաջորդականությամբ համարակալվում են՝ որպես ամբողջական քարտեզի առանձին թերթեր:

Դրանցից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան անվանակարգը (նոմենկլատուրան):

6. ա) Պետական սահմանը եզրավորում է պետական տարածքը, առանձնացնում ինքնիշխան երկրի տարածքը և անցնում է նաև երկրի մակերեսին ուղղահայաց 25 կմ բարձրությամբ մթնոլորտի երևակայական հարթությամբ:

բ) Տարբերում են լեռնագրական, երկրաչափական և աշխարհագրական սահմաններ:

Լեռնագրական-անցնում են գլխավորապես բնական սահմաններով՝ լեռնաշղթաներով կամ գետերի հուններով:

Երկրաչափական-ուղիղ գիծ է, որը միացնում է պետական սահմանի որոշակի կետեր, առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆը:

Աշխարհագրական (աստղագիտական)-գիծ է, որն անցնում է որոշակի աշխարհագրական կոորդինատներով, ինչպես նաև միջօրեականով կամ զուգահեռականով:

7. Աշխարհագրական թաղանթի բնական և հասարակական բաղադրիչների գույքագրման, ծրագրավորման և կառավարման աշխատանքները կատարվում են ԱՏՀ-ի միջոցով: Դրանք օգտագործվում են երկրի մակերևույթին տեղաբաշխված օբյեկտները պատկերելու և տարածականորեն վերլուծելու նպատակով: ԱՏՀ-ն այն բոլոր միջոցներն են, հնարները, համակարգերը և տեսությունները, որոնք ծառայում են տեղեկույթի հավաքմանը, մշակմանը, փոխանցմանը և կիրառմանը:

8. Երկրի առաջացման և զարգացման ամբողջ ժամանակաշրջանը բաժանվում է 3 փուլի՝ երկրաբանական (մինչկենսածին), կենսաբանական (կենսածին) և մարդածին (անթրոպոգեն):

Երկրաբանական փուլը տևել է մոտ 4 մլրդ տարի (կոչվում է նաև Կրիպտոգոյան էրա) և ընդգրկում է արխեյան ու պրոտերոզոյան դարաշրջանները:

9. ՄԱԿ-ը հիմնադրվել է II համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ.-ին, 51 հիմնադիր անդամ երկրների կողմից: Նրա գլխավոր նպատակն է՝ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումը և ժողովուրդների համագործակցության զարգացումը: ՀՀ-ն ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992թ-ից, իսկ այժմ նրա կազմում կա 197 անկախ պետություն (ճիշտ համարել նաև 193-ից մինչև 196-ը):

10. 1. ճիշտ է, 2. սխալ է, 3. սխալ է, 4. ճիշտ է, 5. սխալ է, 6. սխալ է

11. 1, 2, 6, 8

12. 1 կգ պայմանական վառելիքի այրումից ստացվում է 2 կվտ/ժամ էներգիա

ա) 2տ նավթը=2000կգ × 1,5×2կվտ/ժամ=6000 կվտ/ժամ

բ) 5 տ գորշ ածուխը=5000 կգ×0,5×2 կվտ/ժամ=5000 կվտ/ժամ:

Պատ.՝ 6000 կվտ/ժամ և 5000 կվտ/ժամ: Ընդամենը 11 000 կվտ/ժամ